

մէկուն համար յատուկ խնդրանք հայցելով Քրիստոսէ, որպէսզի Սբ. Հոգիին շնորհները համապատասխան ոյժն ու կարողութիւնը տան երախային՝ ճիշտ լսելու եւ խօսելու, բարեգործութիւն կատարելու, սիրտն ու հոգին մաքուր պահելու եւ ոտքերուն ալ աստուածային ուղղութիւն տալու: Դրոշմի խորհուրդը Սբ. Գիրքի երկու կարեւորագոյն դէպքերու կրկնութիւնը կը խորհրդանշէ, նախ Յիսուսի Մկրտութեան պահուն աղանակերպ Սբ. Հոգիի էջքը իր վրայ, եւ ապա Պէնտէկոստէի օրուան Սբ. Հոգիի հզօր գալուստը Առաքեալներուն վրայ՝ երթալու եւ քարոզելու Քրիստոսի Աւետարանը:

Կնքահայրը ծկրորուած եւ դրոշմուած անդամ ըլլալու է Հայաստանեայց Եկեղեցւոյ...

ԽՈՐՀՈՒՐԴ ՄԸ ԵՄ ԵՐԱԽԱՅԻՆ ՀԱՄԱՐ

Դրոշմէն անմիջապէս ետք, քահանան Սբ. Խորան կը բարձրանայ ու Կնքահօր ձեռքէն առնելով երախան իր առաջին երկրպագութիւնն ու պաշտամունքը կատարել կու տայ, եւ ապա Սբ. Հաղորդութիւն, այսինքն՝ Քրիստոսի Մարմինը եւ Արիւնը կու տայ անոր: Այս Հաղորդութեան խորհուրդով՝ երախան կը դառնայ մնայուն անդամ եւ հաղորդակից Քրիստոսի Եկեղեցիին:

Դոկտ. Տ. Զաէն Ա. Քինյ. Արզումանեան



**ՄԿՐՏՈՒԹԻՒՆ
ԵՒ
ԴՐՈՇՄ**



Western Diocese of the Armenian Church of North America
3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504
Tel.: (818) 558-7474 Fax: (818) 558-6333
Email: info@armenianchurchwd.com. www.armenianchurchwd.com
Printed by Diocesan Press
2009

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԴՐՈՇՄ

Ի՞նչ ԿՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Եկեղեցւոյ եօթը Խորհուրդները Աբ. Յոզի շնորհները (պարգեւները) կը բաշխեն հաւատացեալներուն: Անոնք «տեսանելի» միջոցներն են աստուածային «անտեսանելի» ներկայութիւնն ու զօրութիւնը բերելու հաւատացեալներու կեանքին մէջ, որքան ատեն որ այդ Խորհուրդները Քրիստոսի կողմէ հաստատուած արարքներ են ու կը կատարուին իր իսկ ձեռքով: Այդ պատճառով անոնք սուրբ են: Խորհուրդները արարողութիւններ չեն, այլ Քրիստոսով գործուած միջոցներ՝ համաձայն իր հրահանգներուն: Խորհուրդները կը կատարուին ձեռնադրեալ եւ օծեալ պաշտօնեաներու ձեռքով միայն:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՆ ԷՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցի մը առանց Խորհուրդներու կը մնայ անգործօն եւ ապարդին: Ըսողներ կան թէ Աբ. Գիրքին քարոզութիւնն ու զայն կեանքի վերածելը բաւական է քրիստոնէային համար եւ թէ Խորհուրդները աւելորդ կը մնան Աբ. Գիրքին կողքին: Սակայն անոնք կը մոռնան որ Խորհուրդները ծնունդն են նոյն Աբ. Գիրքին եւ հաստատուած Տիրոջ Յիսուսի Քրիստոսի հրահանգով:

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՍՈՒՏՔՆ Է ԵԿԵՂԵՑԻՈՅ

Եկեղեցւոյ առաջնակարգ Խորհուրդը Մկրտութիւնն է ճիշտ այն պատճառով՝ որով Յիսուս ինքզինքը Յորդանան գետ առաջնորդեց Յովհաննէս Մկրտիչէն մկրտուելու համար: Հայ Եկեղեցին նորածին երախաները կը մկրտէ ու անմիջապէս յաջորդ Խորհուրդով կը միւռնէ զայն՝ դրոշմելով Սրբալոյս Միւռնը անոր մարմնին վրայ: Տարիքով յառաջացած եւ անփութութեան հետեւանքով չմկրտուած տղաք եւ աղջիկներ երբեմն կը ներկայանան եկեղեցի մկրտուելու համար: Չանոնք եւս քահանան կը մկրտէ կանոնական ձեւով՝ նախ խոստովանեցնելով զիրենք: Մկրտութեամբ երախան կամ երիտասարդը կանոնական մուտք գործած կ'ըլլան եկեղեցիէն ներս՝ դառնալով լիիրաւ անդամները անոր: Ոչ մէկ ուրիշ Խորհուրդ կրնան ստանալ անոնք՝ որոնք նախ եւ առաջ մկրտուած եւ դրոշմուած չեն:

*Եկեղեցւոյ առաջնակարգ Խորհուրդը
Մկրտութիւնն է...*

ԻՆՉՊԷ՞Ս ԿՐ ԿԱՏԱՐՈՒԻ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Պայման է որ քահանայական կարգ ունեցող հոգեւորական մը կատարէ մկրտութիւնը միայն եկեղեցւոյ մէջ եւ ո՛չ ուրիշ տեղ, որուն համար անհրաժեշտ են ջուրն ու Միւռնը: Անհրաժեշտ է նաեւ Կնքահօր ներ-

կայութիւնն ու մասնակցութիւնը, որպէս հոգեւոր կեանքի առաջնորդը երախայի մանկութեան տարիներուն, զինք պահելով եկեղեցւոյ հովանիին ներքեւ: Կնքահայրը մկրտուած եւ դրոշմուած անդամ ըլլալու է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ եւ լուրջ ու պատասխանատու դեր մը վերցուցած պէտք է ըլլայ, նման երախայի ծնողներուն: Քահանան կ'օրհնէ ջուրը սրբագործուած աւազանին մէջ, որ մնայուն կառոյց մըն է եկեղեցւոյ հիւսիսային կողմը, կաթիլներով սրբալոյս միւռն կը հեղու անոր մէջ, եւ ապա մանուկը կ'ընկղմէ ջուրին մէջ երեք անգամ յանուն Ամենասուրբ Երրորդութեան, տալով երախային անունը առաջին անգամ ըլլալով: Երախան կը դառնայ «որդեգիրը Հայր Աստուծոյ եւ ժառանգակիցը Քրիստոսի»:

Պայծառ է, որ քահանայական կարգ ունեցող հոգեւորական մը կատարէ մկրտութիւնը միայն եկեղեցւոյ մէջ եւ ո՛չ ուրիշ տեղ...

ԴՐՈՇՄ - ԿՆՈՒՆՔ

Դրոշմել կը նշանակէ կնքել, եւ այդ պատճառով նաեւ զայն կը կոչենք Կնունք: Դրոշմը սրբալոյս Միւռնով կը կատարուի Մկրտութենէն անմիջապէս ետք, երբ Կնքահայրը կը գրկէ երախան եւ քահանան Միւռնամանին մէջ իր փթամատը թաթխելով կ'օծէ անոր մարմնին 13 մասերը - ճակատը, աչքերը, ականջները, քիթը, շրթները, ափերը, սիրտը, կրնակը եւ ոտքերը - ամէն